ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար բենզինի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/04» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «17» փետրվարի 2020թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Եղիազարյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետ

հանձնաժողովի անդամներ՝

Արման Ղուկասյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ սնանկության դատարանի աշխատակազմի ղեկավար

Էդգար Տոնականյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար

Գրիգոր Գաբրիելյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ վերաքննիչ քրեականի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Հովհաննես Ստեփանյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Ավան նստավայրի պատասխանատու

հանձնաժողովի քարտուղար՝

Օֆելյա Ասատրյան՝ (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/Մհմ)

1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/04» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերի բացման մասին.

1.1 Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով՝ 2020թ.-ի փետրվարի 17-ին, ժամը 12:00-ին:

1.2 Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

N	Մասնակցի անվանումը
1	<<ՖԼԵՇ>> ՍՊԸ
2	<<ՄԱՔՍ ՕԻԼ>> ՍՊԸ
3	<<ՍԻՓԻԷՍ ՕԻԼ>> ՍՊԸ

2. Տեղեկություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքի գնի վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց, գնման հայտով սահմանված գնվելիք ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման հայտով սահմանված գինը՝ մեկ թվով արտահայտված /ՀՀ դրամ/
1.	Բենզին	16 545 840

3. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը (անունը)	Էլ. փոստի հասցեն
<<ՖԼԵՇ>> ՍՊԸ	flashltdtender@gmail.com
<<ՄԱՔՍ ՕԻԼ>> ՍՊԸ	tendercps@gmail.com
<<ՍԻՓԻԷՍ ՕԻԼ>> ՍՊԸ	maxoil.llc@mail.ru

Ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

Հանձնաժողովը որոշեց նիստը ընդմիջել մինչև կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի ե) պերբերությամբ սահմանված կարգով և ժամկետում (հրավերի 1-ին մասի 4.3 կետի 4-րդ ենթակետ) հայտերի ապահովման բնօրինակները ներկայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ 2020թ. փետրվարի 19-ին՝ ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Արթուր Եղիազարյան

Անդամներ՝

Արման Ղուկասյան

Էդգար Տոնականյան

Գրիգոր Գաբրիելյան

Հովհաննես Ստեփանյան

Քարտուղար՝

Օֆելյա Ասատրյան